

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԿԱՐՄԻՐ ՀՐԱՐՈՒԽՆ

ԿԱՆԱԶ ԴԱՇՏՆ ՇԻՐԱԿԻ

ԿԱՊՈՑՏՆ ԱՐԱԳԱՄ

(Շար. տես Բազմ. 1928, էջ 171)

Նախնական դար. - Epoque primitive.

Երկիրս արևի զանգուածէն բաժնուելն յետոյ, երկար դարեր թաւալեցաւ ու նախնութեան ծոցում մինչև երկու օրուան կոչուած շրջանի մէջ ելաւ իւր գազային վիճակէն և հաստատուն ձևի մտաւ, զոգցեա լոյսն, առաջնաստեղծ տարրը, թանձրանալով և փոխոխելով կազմող հիւլէի մասերն, թափանցկութիւնն կորսնցնելով՝ դարձաւ հող, յորմէ կազմուեցան նախնական հրային ժայռերն, որոնք պատեան կապեցին տակաւին հրահալ նիւթոյն որ երթալով կը փակուէր երկրիս ընդերքնեւրու մէջ։ Չէր կարելի տակ որ երկիրս աներևոյթ էր և անպատրաստ. երևոյթն ունէր վառած հնոցի և պատրաստ ամփոփելու իւր ծոցի մէջ, իրեւ ի կաթնայի, երկնիքի ջուրերն, որք զուրջիտանալով կրկին կը թափէին անձրևի պէս նոյն ամանի մէջ։ Տիեզերական անբաւական և առասպելական սառնարաններէն ելած պաղ քաւ միները ցրտացուցին երկրիս կեղևն և ձևացաւ ցամաքն հրային ժայռերու կոյտերով։

Անցողական դար. - Epoque de transition

Երկիրս ալ իւր մանկութեան օրերն կ'անցնէ, այն հասակին նման որ զուրկ է գիտակցութենէ, բայց կը անանի, կը մեծնայ, մարմնոյ ջիւղերն և ոսկրոտիքն կ'ամրապնդնին, կը դառնայ ծանր բեռ բառնալու ընդունակ։ Երկրի այս հասակը երկրաբաններն կոչեր են անցողական դար։

Անցողական դարաշրջանն, ըստ Ս. Գրոց համապատասխանում է երրորդ օրուան աբարչագործութեան՝ որ օրէնսդրական ոճով միայն սկզբունքներն կ'ակնարկէ, բանի էութիւնն կը մատնանշէ, այնչափ որ հաստատուն գիտութիւնն՝ իբր աստուածային

աւանդ՝ պահէ արարչագործութեան կարգը. ապա թէ ոչ Յննդոց գրքի հեղինակն եթէ երկրաբանական ուսումնասիրութիւն ուզէր մեզ թողուլ, հատորներ չբաւէին պիտի տանելու բոլոր գրածներն։ Որովհետև հինգ վեց տողերու մէջ ամփոփուած է այն անբաւ գիտութիւնն, զոր այս վերջին երկու դարերու գիտնականներն հաւաքեցին և գրեցին առաջին օրերու մասին։ Արդարև Ս. Գրոց այս հակիրճ երկու խօսքերն, առաջին. «Եւ ասաց Աստուած ժողովեցին շուրջը, որ ի ներքոյ երկնից ի ժողով մի և երեկեցի ցամաքն», և երկրորդ. «Եւ ասաց Աստուած, բղխեցէ երկրի զբանջար խոտոյ, և ծառ պողարբը՝ որոյ սերմն իւր ի նմին ըստ ազգի»... Այս հրամանը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գիտնականներու անցողական հողերու կազմութեան, ցամաքի և բուսականութեան նախագործութեան մանրանկար ամփոփումն՝ պատմութիւնն։

Երբ երրորդ օրուան առաւօտն սկսաւ իւր լուսածագն արձակել, երկրիս բնաւականչափ կորսնցուցած լինելով իւր ջերմութիւնն և լոյծ վիճակն, սկսել էր սարսքոտիլ, պաղշտկոտիլ և ամրապնդուիլ. ցրտութեան ենթակայ և վատհաղորդական նիւթեր սկսեւ էին ձևացնել հաստատուն կեղևանքներ, որոնք մօտ մօտ գալով՝ կցուելով իրարու հետ ձևացնում էին ընդարձակ ցամաքներ, շրջապատելով ջրերու կուտակներ, անոնք զուրջիտանալով աւելաւնում էին ցամաքն, մինչև հասաւ այն ժամանակ որ գետինն իւր առաւելութիւնն շեշտեց ջրերու վրայ, և յարմարապէս ծովերն ամփոփուեցան իրենց աւազաններ ի մէջ և երեցու ցամաքն։ Սակայն այս նախնական ծովերն ու ցամաքներն ատակ չէին դեռ գործարանական մարմիններ սընուցանելու, օրը պէտք է հասարակի, դարեւ և դարեւ շրջին մինչև հասնի հրամանն՝ բոյսեր, տունկեր սաղմնափին և լեցնեն ջրեր ոստրէաձև սողուններով և ցամաքներ կենդանութեան և ճոխ բուսականութեամբ։ Միջա թէ է անկասարած են իւրեանց կազմութեամբ՝ բայց հասնում են հսկայ ծառերի բարձրութեան, բնութիւնն շռայլած

է իւր ամբաւ ճոխութիւնն բուսական աշխարհի, որոնք այժմ չեն բաւեր յագուրդ տալ մարդուն անյագ ընչաքաղցութեան, Երբորդ օրուան այս հոծ և սիգապանծ միաբլթակի տեսակ ծառերը կազմած են թանձրամած սև քարածուխն որ տեղ տեղ հասնում է մինչև հարկւր մեղր խորութեան և կազմում անսպասելի հրատառութիւն այն երկրներնու, ուր գտնուում է Չէ մարթ երևակայել որպիսի հնոցներ կազմուել են և կամ որպիսի ըմբիական ուժեր սեղմեր, մածուցիկ և իջուցիկ են այդ անազն փայտերու, խոտերու դէզերն, մինչև վերածեր են քարածուխի։ Անշուշտ մոխրի և փոշիի կը վերածուէին անհատնում փայտերու դէզերն՝ եթէ բացօթեայ վառէին։ Դեռ որ և է կոտակիլովմով չէ բացատրուած անոնց գոյութիւնն։

Առարկողը եղած են թէ՛ Արևու լոյս չեղած ժամանակ, ո՞րպէս գոյութիւն ունեցել են անասունք և բոյսեր, սակայն էական մի առարկութիւն չէ. քանզի սպիտակ լոյսն աւելի արեւի ըմբիական ճառագայթներն առանց ընդդիմութեան կարող էին թափանցել ներս անտառացած գոլորշիին՝ բէն և գազերէն, որոնք դեռ ևս բունած էին մթնոլորտն։ Ի նկատի առնելու է նաև աւրի զանգուածն՝ որ երկու մոլորակներու բաժնուելէն առաջ, տարածութեամբ աւելի մօտ էր երկրիս, որով լոյսն, ջերմութիւնն և ըմբիական ճառագայթներու զօրութիւնն և ներգործութիւնն յուժի էին յաղթելու ընդդիմադիր արգելքներու։ Այնպէս համարելու ենք թէ երկիրս մի մեծ ջերմանոց էր, յորում շամանդաղեալ լոյսի տակ աճում էր շուայլ բուսականութիւնն, Երբորդ օրուան կէսօրից յետոյ երկիրս պատկերացնում էր իւր մակերևոյթին վրայ զազաթնափոս փորքիկ բլուրներ ուսկից ծուխ, շողի, բոց կը շնչէր, և երբեմն ներքին հրանիւթերն ուժգին մղումով պատռելով ոչ շատ թանձր կեղևն՝ ողողում էին ցամաքի մակերևոյթն հրահալ նիւթերով, որք պաղելով կազմում էին հրային կոչուած ժայռեր զոր օրինակ կրանիդի և պորփիրի, սիենիդի ևն, զանգուածներ. մերթ կը

բանային կողապատառ ճեղքուածքներ, որք մետաղներ բովանդակելուն համար, կազմում են մետաղների երակներ (filons)։ Ընդհանուր հայեացք մը երբորդ օրուան շառագունած արևմուտքին, հեշտ էր ասել որ վաղուեան տիւր պիտի լուսաւորէ պայծառ արեգակն. զայս ամենայն գեղեցկութիւն մի ակնթարթում տեսաւ Ալին որ ոչ նիրհէ, և զուարճացաւ և ասաց. Ահա բարի են յոյժ. և եղև երեկոյ և եղև առաւօտ, օր երբորդ։

Երկրորդականն դար. – Epoque secondaire

Երեք օրերու անդուլ աշխատութեամբ, ընթերցում ընթացաւ դէպ ի կատարիւթիւն։ Դադարած են վերծխող գոլորշիք, երկիր ծառացուցիկ է գլուխն, մղելով ջրերն իւր սահմանի մէջ, բարձրացեր են բարձրութիւնք, ծածկուել են բուսականութեամբ, անտառներու մէջ, լճերու մէջ կը վխտան կենդանիք, չորրորտանիք և լուդական սողունք։ Որպիսի թարմ օր էր այն պահուն երբ նախընթաց արեգակի ճառագայթներն սփռեցան երկրիս երեսի վրայ։

Երկիրն ունեցաւ իւր անշէջ ճրագն, այսուհետև լոյս աչքով շրջելու տիեզերական խաւարի միջէն, ծածկելով խաւար անդնոցն, ուսկից երեք օր առաջ առեր էր իւր ծնունդն։ Երկիրս իւր գոյութեան չորրորդ օրն ողջունեց Արեւի զալուստն արեւելքի կողմէն, իսկ Լուսնի ծնունդն արեւմտեան հորիզոնին վրայ։

Ս. Գիրքն ասում է. մեծ լուսաւորն դրաւ Աստուած իշխան ցորեկուսան, իսկ փոքր լուսաւորն իշխան գիշերի։ Ի՞նչ էր ասոնց իշխանութիւնն. այն որ սոքա բաց ի ծամու և ժամանակի չափը սահմանելէն, այլ և իրենց առանձին յատկութեամբ սկսան իրենց իշխանութեամբ կառավարել երկրիս վրայի բոյսերն և անասուններն և ջրերու սողուններն և ձկներն։ Յառաջ քան արևու երևումն, արարչագործութիւնն իւր տղա-յական տհաս հասակին մէջն էր, կակղա միս անասուններ հազիւ կենդանութեան նշան տային, ցամաքի սողուններն հազիւ տղամաշուր լճերի մէջ շարժում էին դանդաղօրէն. միայն բուսականութիւնն՝ ծածկա-

սեր և միարթթականներն, ինչ ինչ պարագաների տակ հասաւ անհրակայելի շտալ անման, ուսկից կազմուեցան քարածուխի շերտերն: Պէտք է գիտենալ նաև որ երրորդ օրուան անցողական դարերուն, երկրիս երեսն տակաւին կլիմաներու բաժնուած չէր, այլ ինչ որ բրածոյ բոյսեր և անասուններն ցոյց են տալիս, երկիրս առհասարակ այժմու ալրեցած գոտիների ջերմութիւնն պահում էր նաև բնեւորների ստուգուած գոտիների վրայ. այսուհետև երբ տան տէրն երևան ելաւ իւր տիկնոջ հետ, անոնք կարգի կը դնեն երկրիս երեսն, բաժնելով կլիմաների, և անհետացած անասունների և բոյսերի փոխարէն, կատարելագոյնները պիտի հասցնեն և բուսցնեն, զարդարելով համազոյց բարձրագոյն և ազնուագոյն արարածներով: Յամաքի վրայ պիտի երևին ստնաւոր անասունը, անտառներ բուսցնեն երկարթիակ թանձրախիտ մայրիներ, օղն պիտի զուարճանայ թռչուններու երգով և օդահերձ սրաթռիչ թևերով, ջրերն, ծովեր և գետեր յորդին ողնաշար լուսկականներով: Բնութեան թագաւորութիւնն հաստատուած է անխախտ երկրիս վրայ, թագաւոր և իշխան տիւ և զիշեր աշխատեցան ինքնարեքարար տեսնել ամենայն հանդերձանք վեհապետի մը երևանալուն:

Վեհի աթոռն կամ պատուանդանն՝ հաստատուն հիմքեր վրայ դրուած է, դադար առած են ողորդողստ պայթումներ, անսպասելի պատահուածքներ, տիեզերաշարժ զղղղիւններ. զի մի՞ լուսաւորն կանոնաւորում է շարժումներն և սահմանափակում այսր և անդր առանձին տեղեր. եթէ նշաններ՝ երկրաբանական փոփոխութեան հետքեր՝ մատանշեն անանոց և բուսոց անհետանալն երկրիս երեսն, դա չի աւել որ նախնական դարերու կատակիկովն ենթարկուած լինի չորրորդ օրուան շրջանն. այլ այնպիսի բնական երեւոյթներ պատահած են, որոց որ այսօր իսկ մենք ներկայ ենք՝ մարդկային, կենդանեաց և բուսոց ցեղերի և տեսակների ջնջումին, առանց քառային փուլաւորումների:

Չորրորդ օրուան արարչագործութեան, համապատասխանում է երկրաբանական՝ Երրորդական դարաշրջան կոչուածն, որ ըստ իւր կարգին բաժնուած է երեք պարբերական ժամանակի, ըստ բնութեան գործարանական մարմիններու և կազմութեան երկրին, երբ հետզհետէ ջրեր քաշուելով նստողական ժայռերու ընդարձակ զանգուածներ թողած են երկրիս ամէն կողմն:

Երկրորդական հողերու ուսումնասիրութիւնն ցոյց տուած է որ բուսականութիւնն թէ և բազմատեսակ, այլ ոչ այնչափ առատ և շտալ է քան զնախնից օրուանը. ընդհակառակն յայնչափ բազմաւորում են մեծամեծ սողուններ և չորքոտանիներ որք ջրերու և ցամաքի վրայ երկար դարեր տարածում են իրենց տիրապետութիւնն: Երկրիս հողովելով դարուց ի դարս, փոխելով և կորսնցնելով օդի և ջրի կազմութենէն կենսական նիւթեր՝ այդ անանոց աննդհան և անման յարմար, անոնք սնունդ դեան պակասութեան համար, անհետանում են երկրի երեսից, տեղի տալով բարձրագոյն և կատարելագոյն ստեղծագործութեան:

Արեւ և լուսինն իրենց առաջին շրջանն կատարելով հասած էին ի կայի իւրեանց. արեւն հանդէպ Գարաւոնի և լուսինն հանդէպ ձորոյն Ելոնայ: Երկու իշխաններու կառավարութեան տակ երկիրս սկսաւ աւելի կանոնաւոր ապրիլ, պնդեց հողերն, բացաւ կուրծքն ջրիմ ճառագայթներու դէմ, խաղաղեց ներքին խլրտուցներն, և աւելի ոյժ տուաւ ջրերու պարզուելուն, առկայ մրուր, աւազ և չլուծուած քիմիական նիւթեր, տարրալուծուելով իջան նստան յատակը և ձևացուցին նստողական և հատաւոր կոչուած ժայռերն: Բազմապիսի ծովի և ցամաքի անասուններն և ծառերն այլ տեսակ և այլ կերպարանք զգեցան: Չորրորդ օրուան դարաշրջանի անասունները չէ յիշում Ս. Գիբբը, եթէ բնագրէն սողեր ինկած չեն. գուցէ անոր համար որ թէ և մեծամեծ աննիւթեթ ջրային կամ երկակենցաղ գազաններ էին, բնութիւնն զուարճանալու համար առ ի զարդ ստեղծ

ծած էր և անպիտան յաջորդ դարերու համար: Երբ լաւագոյն տեսակներ հասցնելու համար երկիրս, քնութիւնն իւր կլիման փոխեց, սկսան անով տեղական պայմաններն աննպաստ դառնալ հսկայ անասնոց ապրելուն, անոնք ջնջուեցան երկրի երեսէն տակաւին հինգերորդ օր չհասած: Սակայն քնութիւնն իբրև մայր բազմածին, նախապէս պակասաւոր ծնած զաւակնեւ, ըսն տեղ, բարիներ, օգտակարներ և կատարեալներն պիտի բղխեցնէ իւր ծոցէն. որոնք կարենան պարծիլ Որմզդի արարած լինել:

Երկրորդական դարաշրջանի արեւն ալ հասած էր իւր ընթացքի վերջը, մուտքի հորիզոնի վրայ կուտակուած բոցավառ ամպերի ետեւէն տուելջեան ջահը յարաշարժ սահում իջնում էր մօրը արգանդն. ատրաշտէ կտնդն երբ իւր հրեղէն բլրերն փակեց, Աստուած վերէն տեսաւ որ բարի է ամենայն. «Էւ եղև առաւօտ և եղև երեւելոյ՝ օր չորրորդ»:

Երրորդական դար. — Epoque tertiaire

Նախախնամական էր չորրորդ օրուան Արեւն, որ մոլորակային դրութեան սանձերն ի սպառ իւր ձեռքին մէջ ամփոփեց, և ամէն կողմ իւր կենդանաբար շերմութեամբ և այլ ազդակներու զօրութեամբ տէր դարձաւ շնչոց, կենդանեաց և բուսականութեան, և պատրաստեց յարմարաւոր մթնոլորտ յաջորդ օրուան զարմանազորութեանց, որով Աստուծոյ մէկ խօսքով, երկիրս իւր հողէն և ջրէն պիտի հանէ նոր տեսակի շնչաւոր գեոուններ, կենդանիներ և թևաւոր թռչուններ, տիրելու երկրի և օդի թագաւորութեան: «Հանցեն ջրեր գետունա շնչոց կենդանեաց և թրուչունս թևաւորս ի վերայ երկրի ըստ հաստատութեան երկնից»:

Հինգերորդ օրուան դարաշրջանին, գիտնականօրէն կոչուած Երրորդական դար, երկիրս կրում է մեծ ճնաքանական փոփոխութիւններ. արդէն հողագնդին կեղևն այնքան թանձրացեր է որ կեղերական շերմութիւնն այլ ևս կորուսած է իւր ազ-

դեցութիւնն բուսոց և կենդանեաց վրայ, երկրիս երեսը երթալով ցրտանում է: Տիրող շերմութիւնն արեւինն է որ կանոնաւորում է երկրիս կեանքը և կամաց կամաց շեշտուում է կլիմաների փոփոխութիւնն, մասնաւոր երկու բեւեռների վրայ: Շատ հեռու չէ այն օրն, որ մեր ներկայիս այրեցած գօտիների տակ ապրող կենդանիներն իմանան յանկարծ բռնուին ցուրտի, բուրբի և սառոյցների մէջ՝ Թաղութն, մեան մինչև մեր ժամանակներ:

Երրորդական դարն նշանաւոր է անով, ըստ երկրաբանական գիտութեան, որ համաձայն արարչական յատուկ հրամանին թէ՛ ջրէն և հողէն ելլեն շնչաւոր կենդանիք: Նկատուած է որ այս հրամանով բուլբուլին նոր գործարանաւոր մարմիններ երևան կ'ելլեն, աւելի կատարեալ մարմնոյ կազմութեամբ. այս նոր ստեղծագործութեան մէջ աչքի է ինկնում ստանաւոր մեծ անասունների ցեղն և պատկանում են կարծրակաշի չորքոտանեաց, իւր-նութիւնն հողով և ջրով պատրաստուած է հիւրասիրելու նոր եկուրներն, կան առձեռն պատրաստ պարարտարօտ մարգագետիններ ճարակելու համար, յորմէ պատրաստեն կաթն նոր ձագերի սնունդ տալու. իսկ թռչուններու համար երկիր ինքնին բերէ զարի, ցորեն արմտիք, զիջակերաց համար՝ թող զհամազգիս, առձեռն պատրաստ կան մանրիկ անասուններ, երկչոտ ճագարն և նմանիք: Նմանապէս ծովերու մէջ վիստում են ամենազգի լուղականներ:

Հինգերորդ օրուան շրջանի մէջ արդէն երկիրս առեր էր գրեթէ այն աշխարհագրական դիրքն և ձևերն, ինչ որ տեսնում ենք մեր ժամանակներն: Մեծամեծ լեռներ կազմում են երկար շղթայներ, պատեւով երկրագունդս այլ և այլ գօտիներով, լեռանց կատարէն և ծոցէն բղխում, վիժում են աղբիւրներ, անընդհատ առատ անձրևներ լեցնում են փոքրիկ առուակներ և կազմում մեծամեծ գետեր, որոնք իրենց ընթացքի հետ ճշում տանում են աւազ, տիղմ, և դիզուում են ծովերի յատակ, տափարակ տեղեր, յորմէ կազմուած են

շատ նստողական հողեր, հարուստ անոյշ ջրի ժմականերով: Բուսականութիւնն, ծառեր, ծաղիկը, արմաթիքի տեսակներ շոյալորէին բռնած են սարերը, ձորերն էր դաշտեր, յոյժ գեղեցիկ և վերամարմ. չորքոտանիք և թուշունք ազնուացած տեսակաւ, բարակ օղն շնչելով՝ կայտառ, պարարտ և հպարտ կը շրջին դաշտերու մէջ՝ անկասկած տակաւին դարանակալ որսորդներէ: Աստուծոյ օրհնութեամբ ջուր և ցամաք հանեցին՝ մրցելով միմեանց հետ, մեծամեծ լուղականներ, կէտս մեծամեծս և լցին ծովերը. և մեծամեծ թանձրամարմին չորքոտանիք լցին սար ու ձոր. աղբիւրներէն ելան ձիւնաթոյր կարապանք և գետերէն լիամազիլ արծիւներ և բռնեցին սարերու կատարները: «Եւ եղև երեկոյ և եղև վաղորդայն, օր հինգերորդ»:

Չորրորդական դար. - Epoque quaternaire

Ըստ երկրաբանական գիտութեան երրորդական դարը իւր շրջանն բոլորելու հասած, տեղիք տալիս է Չորրորդական դարաշրջանին որ ի սկզբան գրեթէ անընդմարելի կ'անցնի. վասն զի նոյն բուսականութիւնն է, նոյն կենդանիք և աշխարհագրական դիրքն թէ՛ լեռներուն և թէ՛ ծովերուն կան և մնան զրեթէ անփոփոխ: Իսկ կամելով յատկանշել յատուկ նկարագրով վեցերորդ օրուան արարչագործութիւնը պէտք է ըսենք որ Աստուծոյ հրամանն թէ՛ «Հանցէ երկիր շուշէ կենդանի ըստ ազգի չորքոտանի և գամնայն սողունս ըստ ազգի իւրեանց» կը յաւելու «և ետես Աստուած զի բարի են» և ապա կը յաւելու մարդու ստեղծումն: Չարմանալի համընթացութիւն մը կը տեսնուի Ս. Գրքոց պատմութեան և գիտութեան ցուցածին միջև: Վեցերորդ օրուան առաջին քառորդին, չորրորդական հողերու մէջ կան հսկայ չորքոտանեաց բրածոյ ոսկորտիք, որոնք վեցերորդի ստեղծագործութեան մէջ մտնելով հանդերձ, անոնց սերունդն շիջել է. այս անասուններէն են օրինակի համար, Մամուր, Այրի սար կոչուածն, և նոյնպէս

հսկայ թռչուններու տեսակներ որպէս Դիմորիս կոչուածն, որոյ ձուերու տարողութիւնն մինչև տասը լիտրի հասնում է. որ երբեմն առասպել կարծուել է, սակայն բնագէտներ բնական պատմութեան հետազոտութեամբ հաստատել են անոնց ստուգութիւնն: Իսկ մնացած անասունները չորքոտանիք, սողունք և գազանք ի սկզբանէ ինչպէս եղած են, մարդու ստեղծմանէ առաջ, նոյնպէս կան և մնան, առանց մի որ և է զգալի փոփոխութեան ձևի և տեսակի: Երբայորդներն ոչ աւելի հսկայ և ոչ աւելի ուժեղ են քան անհետացած տեսակներ, որպէս զի կարելի լինէր պատճառ բռնել այն ցեղերի ջնջումին, և ոչ որ և է կատակելով պատահած է որուն զոհ գնացած լինին: Մի անհնարին ենթադրութիւն կարելի է ընել որ կամ երկրիս կեղևի թանձրանալով երկար ժամանակ ընտանալ կողմ և դուրս փչել են հեղձուցիչ գազեր և կամ երկրիս անցեր է թունաւոր գազերու զօտի մը և դրանց զոհ գնացեր և շիջել են հսկայ անասուններն, ինչպէս, եթէ ի դէպ է ստել, մեծ պատերազմին ժամանակ հեղձուցիչ գազեր շիջուցին հարկը հազար մարդկային կեանքեր: Արարչական հրամանն շարունակելով իւր ստեղծագործ զօրութիւնն նոր արարածներ բխեցուց հողէն և ջրէն, որպէս զի բնութեան արդուագործն լրիւ լինի մարդու գալստեան ժամանակ:

Չորրորդական դարուն կարելի է ըսել տարեբային փոփոխութիւններ չէ կրում երկրիս, իւր ներքին տանջանքներէն խաղաղած է մեծաւ մասամբ. սակայն արտաքինապէս ենթարկուած է օդի և ջրի ազդեցութեանց, մեքենական քայքայման, որով երկրիս փոփոխում է իւր երեսն և մակարդակն: Նախընթաց դարերուն տեսնուում էին հրաբխի և նստողական հեղեղներու շերտեր այլ և այլ ուղղութեամբ և այլևայլ խորութեամբ, իսկ ներկայ դարուս հողերու կազմութիւնն նախ ջրերու արդիւնք է, հեղեղներու կամ լաւն ստելով ջրհեղեղներու. այս պարագան տեղի ունեցած է

անշուշտ մարդու երևնալէն յառաջ. որի նմանն յետոյ պիտի լինի, որ արդէն կարելի է պատմական ժամանակի մէջ հաշուել: Երկրորդ տարեհային պատմաբանը եղած է Սահակ Գաբրիէլ, որ ըստ լուսնի շրջանի հաշուին՝ տեղի ունեցած է մարդուն ստեղծմանէն ճիշտ չորս տարի: Հիւսիսային բեռի սահմաններու մէջ գտնուած կենդանիները ժամանակն եղած է, որով կարելի է գուշակել թէ ցայն վայր բնակներն հասարակածի տակի շերմութիւնն ունէին:

Վեցերորդ օրուան փառաւորութեանց մէջ արարչութեան գլուխ գործոցն մարդուն երևումն է երկրի վրայ: Սա միւս անասուններու պէս լոկ հրամանով մը չէ որ հողէ և ջրէ պիտի բրկէ, այլ ամենեցուն ճարտարապետն Աստուած, ըստ իւր պատկերի և նմանութեան պիտի կերտէ, կերպածէ, արուեստագործէ, ուղղորդ, կանգուն, ճակատ բարձրահայեաց, աչքերն յառած աստղերուն, յիշելու իւր սկիզբն և վախճանն՝ ուսկից եկաւ Աստուծոյ շունչն, հոգին կենդանարար և խառնեցաւ իւր հոգեղէն բնութեան՝ էութեան հետ: Զորորդակն դարաշրջանն որ աստիճանաբար կապուած է նախնութեաց դարաշրջաններու հետ և պահած է զարգացման կապը անկատարէն դէպ ի կատարեալ գործարանական կեանքը, ճանաչելով որ մարդն ևս հողէն ելած է, սակայն չկայ ապացոյց մը որ առաջին բանական արարածն նոյն իսկ ըստ մարմնոյ կազմութեան անբան անասունէն ծագած լինի. իսկ երևելի բնագէտներն հիացմունքով նայում են մարդուն գրաւած առանձնաշնորհեալ աստիճանը, և հոգոյն խորքէն տեսնում են շնորհաց ճառագայթն որ գինքն Աստուծոյ հետ կապում է և հաւատում որ զաւակ է երկնքի:

Այս համառօտ համեմատական տեսութեան մէջ ջանացինք ցոյց տալ, հետեւելով իմաստնագունից, թէ Ս. Գիրք և ար-

տաքին գիտութիւնն՝ համընթաց են արարչագործութեան պատմութեան մէջ, և վեցերեայ բաժանումն գիտնականօրէն եղած է, ի բաց առած աստուածային յայտնութիւնն, և վերագրելու է հեղինակի անձնական յատկութեան որ վարժուած էր ամենայն գիտութեամբն Եզրպատացոյց. որոնք ըստ իւրեանց կարգին, ոչ եթէ մարդկեղէն ճարտարութեամբ միայն ստացան՝ այն գիտութիւնն, այլ որպէս Առաքեալն ասաց. «Վասն զի գիտութիւնն Աստուծոյ յայտնի է ի նոսա. ըսնդի Աստուած իսկ յայտնեաց նոցա»: Բայց որովհետեւ «նանրացան ի խորհուրդս իւրեանց և խաւարեցան անմտութեամբ սիրտը նոցա»: Մովսէսի ձեռքով Աստուած ճշմարտութիւնն վերականգնեց և դրաւ մարդը իւր պատուին մէջ, ստուգապէս պատմելով նորա լինելութեան պատմութիւնն սկիզբն, մէջն և վախճանն:

(Շարունակելի) Հ. ԳԱՐԻԲԵԼ ՆԱԶԱԳԵՏԵԱՆ



Գ Ր Ա Ն Ա Ն

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐՈՒ ՎՐԱՅ

(ԺԶ. ԺԷ. ԺԸ և ԺԹ Բ-Գ. Կ. Պ-Լ.)

Մեր մէջ տապանաքարերու ուսումնասիրութիւնը իւր հետեւողները և հետապնդողները չէ ունեցած բառին իսկական իմաստովը. և ասի անհրաժեշտ է, մանաւանդ մեզ համար՝ հետեւեալ պատճառներով:

1. Նախ՝ իբր արեւելեան ազգ մը ազգեցութիւնը կրած ենք մեզ շրջապատող ազգերուն: Հետեւաբար մեր տապանաքարերը կը տարբերին եւրոպականներէն թէ՛ իմաստի և թէ՛ քանդակներու կրկին տեսակէտներով, որոնք շատ անգամ զուտ արեւելեան դրոշմ կը կրեն:

2. Հին հայ տապանաքարերու ուսումնա-

1. Շահակն յօդուանաբարբ հեղինակը սկսած էր հրատարակել՝ փոքր մաս մը և անկատար, «Հայաստանի կողմէն» մէջ, Հիւսիս վերջակէտով՝ ընդարձակած և

մերողացուցած, զայն կը ներկայացնէ այդ նիւթով հետաքերտողներու այս էջերուն մէջ: ԽԲԲ.